

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 8-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը, որ նաև Զատիկ է կոչվում, քրիստոնեական կրոնի մեծագույն տոներից մեկն է: Յուրաքանչյուր տարի այն մեծ հանդիսությամբ է նշվում Մայր Աթոռում: Նախորդ տարիների համեմատությամբ այս տարի ավելի մեծ թվով ուխտավորներ էին եկել Ս. Էջմիածին:

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով ու «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ, առաջնորդվում է Մայր տաճար՝ Զատկական հանդիսավոր պատարագը մատուցելու:

Հայրապետական Զատկական պատարագին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հայրենի մտավորականներ, սփյուռքահայ հյուրեր, ուխտավորներ:

Ս. պատարագին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ստեփան Վարդանյանն ու տեղակալ պրն. Ռաֆիկ Զարգարյանը:

Սուրբ պատարագի հոգեպարար երգեցողությունը կատարում է Մայր տաճարի քառաձայն երգչախումբը: Երգեցողությանն իր մասնակցությունը բերեց նաև տաղանդաշատ երգչուհի Գոհար Գասպարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր, քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 3):

Պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը նույն հանդիսավորությամբ առաջնորդվում է Վեհարան՝ իր ճանապարհին օրհնելով հավատացյալների բազմությանը: Վեհարանում եկեղեցական թափորի մասնակիցները աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետին Զատկական տոնի առթիվ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: